«ԳՐԻԳՈՐԻՍ» ԲԺՇԿԱ-ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՔՈԼԵՋ

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ (ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ) ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

ԵՐԵՎԱՆ 2019

Հաստատված է
Տնօրինական խորհրդի նիստում
«29» 08 2019թ.
Արձանագրություն № 1.

Հաստատում եմ
«Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի
Տնօրեն՝ Ի. Վարդանյան
«02» 09 2019թ.

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջում (այսուհետ՝ Քոլեջ) ուսանողների հավաքագրման (մասնագիտական կողմնորոշման) քաղաքականությունը ներկայացնում է Քոլեջի ուսանողների հավաքագրման հիմնական ուղղությունները և քայլերը:

Փաստաթղթում ներկայացված են Քոլեջի ուսանողների ընդունելության կազմակերպման գործընթացները, որոնք նախատեսում են տվյալ գործընթացի նպատակային խնդիրների լուծումները:

Ընդունելության համակարգին (մասնագիտական կողմնորոշման) վերաբերող գործընթացներն ներառված են Քոլեջի ռազմավարական ծրագրում (նպատակ 4, խնդիր 1) և Քոլեջի պրակտիկայի և կարիերայի բաժնի կանոնակարգում, որոնք ապահովում են տվյալ քաղաքականության իրականացումը:

Քոլեջի ընդունելության համակարգի ռազմավարական նպատակն է՝ ընդունելության կայուն համակարգի ստեղծում, ամրապնդում, կատարելագործում, դիմորդների կայուն հոսքի ապահովում՝ ուսանողական համակազմի ավելացմամբ:

Քոլեջի ուսանողների ընդունելության քաղաքականության նպատակն է սահմանված ընթացակարգերի միջոցով ապահովել լիցենզիայով հատկացված սահմանային տեղերին համապատասխան դիմորդների ընդունելություն, ըստ գործող մասնագիտությունների:

Քոլեջի ուսանողների հավաքագրման քաղաքականության մշակման համար հիմք են հանդիսացել՝

- «Քոլեջի 2019-2024թթ Ռազմավարական զարգացման ծրագիրը»,
- «Քոլեջի գործունեության 2016-2019թթ. SWOT վերլուծությունը»,
- Քոլեջի գործունեության արդյունավետության գնահատման նպատակով ուսանողների շրջանում իրականացված հարցումների վերլուծությունները:

Ուսումնասիրվել են նաև ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության տվյալները, որի համաձայն՝ վերջին տարիներին զգալի նվազել է ՀՀ մշտական բնակչության թվաքանակը (http://www.armstat.am/file/doc/99504343.pdf):

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Նպատակն է՝ Քոլեջի ընդունելության համակարգի կատարելագործում և ուսանողական համակազմի համալրման ընդլայնում՝ պոտենցիալ դիմորդների հոսքի ապահովում:

Խնդիրներն են՝

1. Ըստ մասնագիտությունների պահանջարկի ընդունելության տեղերի համալրում:
2. Դիմորդների հնարավոր համակազմի մասնագիտական խորհրդատվության տրամադրում և կողմնորոշում:
3. Ընդունելության գործընթացի ապահովման համար տեղեկատվական համակարգի զարգացում և ընդլայնում:
4. Դիմորդների նախասիրությունների և կողմնորոշման հետ կապված կարիքների վերհանում և բարելավում:
5. Քոլեջի վերաբերյալ գովազդների ընդլայնում և ակտիվացում, ներգրավելով ուսումնական ստորաբաժանումներին, ուսանողական խորհրդին, ինչպես նաև պոտենցիալ գործատուներին և այլ շահագրգիռ կազմակերպություններին:
6. Ընդլայնել ճանաչողական այցերի ժամանակ դպրոցների աշակերտների հետ տարվող աշխատանքները և աշխարհագրությունը:
7. Աշխատաշուկայի պահանջներին համապատասխան՝ պոտենցիալ դիմորդների նախասիրությունների, կողմնորոշման և կրթական կարիքների վերլուծություն:

3. ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՐԿՈՒՄԸ

Քոլեջի դիմորդների ընդունելությունը պետք է ապահովի ուսանողների հոսքի ավելացում և կայունություն՝

- դիմորդների շրջանում տեղեկատվության ապահովման նպատակով գովազդային տեղեկատվական նյութերի տպագրություն,
- ԶԼՄ-ներում (ռադիո, հեռուստատեսություն,) համացանցում հայտարարություն-ների տեղադրում և հրապարակում,
- տարբեր տեղեկատվական նյութերի տրամադրում (ընդունելության հետ կապված կարգեր, տեղեկատվություն մասնագիտությունների վերաբերյալ, ստացվող որակավորումներ և այլն) դպրոցներ այցելության ժամանակ:

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Քոլեջում դիմորդների ընդունելության գործընթացի պլանավորման, կազմակերպման և իրականացման պատասխանատուն Քոլեջի ընդունող հանձնաժողովն է և պատասխանատու քարտուղարը:

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

Սույն ընթացակարկարգով սահմանվում է Քոլեջի կողմից մասնագիտական կողմնորոշման գործունեության հիմնական ուղղությունները և բովանդակությունը՝ դիմորդներին ներգրավելու նպատակով:

1. **Սույն ընթացակարկարգի իրականացման համար պատասխանատու են.**

- Քոլեջի պրակտիկայի և կարիերայի բաժնի պատասխանատուն,
- Մանկավարժական խորհուրդը,
- մասնագիտական ամբիոները,
- առարկայական (ցիկլային) հանձնաժողովները,
- ուսանողական խորհուրդը:

2. **Ընդհանուր դրույթներ՝**

Մասնագիտական կողմնորոշումը մասնագիտական ինքնորոշման գործում աջակցման հատուկ միջոցառումների համալիր է: Այն օգնում է անձին մասնագիտական կողմնորոշման հարցում:

Մասնագիտական կողմնորոշման համակարգը Քոլեջում ներառում է՝

- դիմորդների մասնագիտական կողմնորոշման խորհդատվություն և մասնագիտության ընտրություն,
- մասնագիտական կողմնորոշման խորհրդատվության տրամադրում,
- մասնագիտական գործունեության և աշխատատեղերի վերաբերյալ խորհրդատվության, տեղեկատվության և ուղղորդման տրամադրում:

3. **Քոլեջի մասնագիտական կողմնորոշման խնդիրներն են՝**

- հիմնական, միջնակարգ, ավագ դպրոցների հետ համագործակցության ընդլայնում և ամրապնդում,
- ուսանողների համակազմի ձևավորման ապահովում,
- շրջանավարտների շրջանում խորհդատվության և տեղեկատվության տրամադրում առկա աշխատաշուկայի վիճակի, աշխատատեղերի վերաբերյալ:

4. Քոլեջի կողմից մասնագիտական կողմնորոշման գործողություններն են՝

- դպրոցներում մասնագիտական կողմնորոշման միջոցառումների (զրույցներ, նութերի ցուցադրում) կազմակերպում և անցկացում,
- դպրոցներում Քոլեջի մասնագիտությունների վերաբերյալ տեղեկատվական նյութերի տրամադրում,
- դպրոցների տնօրենների հետ փոխգործունեության ապահովում և զարգացում,
- ընդունելության կարգերի, պայմանների վերաբերյալ տեղեկատվության տրամադրում արտաքին շահակիցներին (աշակերտների ծնողներին, ավագ դպրոցի աշակերտներին և այլն):

5. Գործողությունների քայլերը՝

- համագործակցող դպրոցների աշխարագրության ընդլայնում (այցեր մարզեր և համայնքներ),
- դպրոցներում մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ խորհրդատվությունների կազմակերպում և անցկացում,
- աշակերտների և դիմորդների այցերի և հանդիպումների կազմակերպում քոլեջում,
- ցուցադրական և բաց դաների կազակերպում աշակերտների և դիմորդների այցերի ժամանակահավածում,
- տարբեր ճանաչողական գովազդային նյութերի պատրաստում դիմորդների համար (բուկլետներ, տեղեկատվական տեսահոլովակներ, քոլեջի լոգոյով, կայքի հասցեով ատրիբուտներ և այլն),
- շրջանավարտների շրջանում տեղեկատվության և խորհրդատվության ապահովում՝ աշխատատեղերի և աշխատանքի տեղավորման հարցերի շուրջ: